Արձանագրություն N 5

ԾՔ-ԳՀԾՁԲ-19/37 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման **արտահերթ** նիստի

ք.Ծաղկաձոր 22 նոյեմբեր 2019թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Գ.Հայրապետյան
անդամներ՝ Ն.Խաչատրյան
Ն.Սիմոնյան
Վ.Հայրապետյան
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. <<ԾՔ-ԳՀԾՁԲ-19/37>> ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը վերագնահատելու մասին

(Գ.Հայրապետյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ՝

<<ԾՔ-ԳՀԾՁԲ-19/37>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը վերագնահատելիս ի հայտ են եկել նոր հանգամանքներ, մասնավորապես՝ <<ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ>> ՍՊԸ-ի հայտը գնահատելիս վրիպակ է տեղի ունեցել և էլեկտրոնային որոնողական համակարգի միջոցով ուսումնասիրություն կատարելուց պարզ է դարձել, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին մասնակից կազմակերպությունը չի համապատասխանում. Տեխնիկական բնութագրով սահմանված է, որ Կատարողը պետք է ընդգրկված լինի Լիազոր մարմնի կողմից վարվող հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում, սակայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված <<ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ>> ՍՊԸ-ն ընդգրկված չէ վերը նշված ցանկում /minfin.am կայքից ներբեռնված ցանկը կցվում է սույն արձանագրությանը /:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 67 կետը՝ Գնահատող հանձնաժողովի կողմից **<<ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ>> ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	**Հայտի գնահատականը**
<<ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ>> ՍՊԸ	**Անբավարար /մերժված/**

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

2. Միաժամանակյա բանակցություններ վարելու մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողով որոշեց.

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման >> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով **<<ԾՔ-ԳՀԾՁԲ-19/37>>** ծածկագրով ընթացակարգի հրավերի 7.7 կետը՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային եղանակով ծանուցել և հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

3. Գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը և <<ԾՔ-ԳՀԾՁԲ-19/37>> ծածկագրով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը անվավեր ճանաչելու մասին

(Գ.Հայրապետյան)

<<ԾՔ-ԳՀԾՁԲ-19/37>> ծածկագրով ընթացակարգի Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ իր կողմից ընդունված **թիվ 4 արձանագրությունը և <<ԾՔ-ԳՀԾՁԲ-19/37>> ծածկագրով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը ճանաչել անվավեր:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019 թվականի նոյեմբերի 25-ին, ժամը 11:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը	**Ստորագրությունը**
Նախագահ՝ Գ.Հայրապետյան	
Անդամներ՝ Ն.Խաչատրյան	
Ն.Սիմոնյան	
Վ.Հայրապետյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	

Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկ		
N	**Կազմակերպության անվանում**	**գրանցման ամսաթիվ**
1	«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	26.10.2015թ.
2	«ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	31.01.2018թ.
3	«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ	14.06.2019թ.
4	«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	28.10.2019թ.
5	«ՀԱՅԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	01.11.2019թ.
6	«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ	07.11.2019թ.
7	«ԷՅ-ԷՆ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	14.11.2019թ.